

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2022 թ. հոկտեմբերի 20-ին կայացած թիվ 5 նիստի

Գիտական խորհրդի 38 անդամներից հարցմանը մասնակցել են 27-ը:

Օրակարգում՝

1. ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ. Մարիամ Աշոտի Շահինյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:
2. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Բժշկականաբանական գիտությունների ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Կարենի Սկրտչյանի թեկնածուական ստենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ-ի կենսաֆիզիկայի ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ. Մարիամ Աշոտի Շահինյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՅ՝ կենսաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ՝ կ.գ.թ., դոցենտ Լ.Ս. Գաբրիելյանը, ով գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց կենսաֆիզիկայի ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ. Մարիամ Աշոտի Շահինյանի անձնական գործը: Ստորև ներկայացված է Մ.Շահինյանի անձնական գործի և գիտամանկավարժական գործունեության տյալները:

Մարիամ Աշոտի Շահինյանը (ծնված 1984թ., ք. Ապարան) կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի ամբիոնում աշխատում է 2007 թ-ից: Սկզբում որպես գիտական թեմայի լաբորանտ, ամբիոնի գործավար, ապա կրտսեր գիտաշխատող: 2013 թ-ից նույն ամբիոնում համատեղել է որպես դասախոս ժամավճարային հիմունքներով, իսկ 2020թ-ից զբաղեցրել է կենսաֆիզիկայի ամբիոնի ասիստենտի (0.25 հաստիք) պաշտոնը: 01.09.2022 թ-ից կենսաֆիզիկայի ամբիոնի ասիստենտ է՝ 0.75 հաստիքով: 2012թ. Մ.Ա. Շահինյանը պաշտպանել է թեկնածուական թեզը և ստացել կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Մ.Ա. Շահինյանը կարդում է «Մոլեկուլային կենսաբանություն», «Ֆոտոհամակարգերի կենսաֆիզիկա» և «Ոչ իոնիզացնող ԷՄՃ-ի ազդեցությունը կենսաբանական համակարգերի վրա» առարկաների դասախոսություններ և վարում մի շարք լաբորատոր և գործնական աշխատանքներ: Նրա ղեկավարությամբ կատարվում են ավարտական աշխատանքներ և պաշտպանվում մագիստրոսական թեզեր: Լ.Ս. Գաբրիելյանը

նշեց, որ Մ.Ա. Շահինյանը հրապարակել է 31 գիտական աշխատանք, որից 29-ը հոդված և 2 ուսումնասիրողական ձեռնարկ: Վերջին 3 տարում հրապարակել է 10 գիտական հոդվածներ:

Մրցութային հանձնաժողովի նախագահը իր եզրակացության մեջ նշեց, որ դոցենտի կոչման հավակնորդ Մ.Ա. Շահինյանի գիտամանկավարժական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը բավարարում են ԲՈԿ-ի կոդիֆից ներկայացվող պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հիմք ընդունելով ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 2. 5(2) կետը՝ «ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 177-Ն որոշման հավելված», երաշխավորել Մարիամ Աշոտի Շահինյանին՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

ԼՍԵՑԻՆ՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Բժշկակենսաբանական գիտությունների ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Կարենի Սկրտչյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, մարդու և կենդանիների ամբիոնի վարիչ, կ.գ.թ. դոցենտ Ա. Ֆ. Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել Լիլիթ Կարենի Սկրտչյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Կրտսեր դպրոցականների տարբեր մորֆոֆունկցիոնալ ցուցանիշների փոփոխությունները "Սթրեթչինգ" ֆիթնես ծրագրով բեռնվածության պայմաններում» վերնագրով Գ.00.09 «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» մասնագիտությամբ և գիտական ղեկավար հաստատել բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարինա Գերասիմի Աղաջանյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
դոցենտ՝

Ի.Վ. Շահազիզյան

21.10.2022թ.